ԿԱՐԾԻՔ

Ալբերտ Մարատի Զուրաբյանի «Անձի մասնագիտական անվտանգության հոգեբանական նախադրյալների ապահովումը ՏՏ կիրառման պայմաններում» թեմայով ատենախոսության ԺԹ.00.01. Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

XI դարի գիտատեխնիկական, սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական բուռն զարգացումների պայմաններում տեղեկատվական միջոցների ու տեխնոլոգիաների տիրապետումը հանդիսանում են ժամանակակից մարդու բազմակողմանի պատրաստվածության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Դա բացատրվում է նրանով, որ օրեցօր սրվող մրցակցության պայմաններում գիտելիքը, տեխնոլոգիական նորագույն միջոցներին տիրապետելը դառնում է հիմնական պայման, որով իրականացվում են անձի մասնագիտական ընտրության գործընթացը, գործունեության արդյունավետության ապահովումը, մասնագիտական աճի ու անհրաժեշտ եկամուտների ձեռքբերումը:

Հիմնախնդրի այժմեականությունն ու կարևորությունը դառնում է էլ ավելի հրատապ, հատկապես այն դեպքում, երբ խնդիրը դիտարկվում է գործունեության առանձնահատկությունների, անձի մասնագիտական պիտանիության, ինչպես նաև ընտրության պահանջների տեսանկյունից: ՀՀ վերջին 25, 30 տարիների սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական իրադարձությունների զարգացումների արդյունքում առաջացած մասնագիտությունների բևեռացման ու աշխատատեղերի սղության պատճառով մասնագետների միջև առաջացած սուր մրցակցությունը օրեցօր դառնում է դժվար հաղթահարելի, բայց և շատ կարևոր սոցիալ-տնտեսական գործոն:

Մասնագիտական և անձնական կյանքում ինքնահաստատման դժվարին ճանապարհին պակաս կարևոր չէ ՏՏ օգտագործման մշակույթի ձևավորումը, մարդկանց անհատական առանձնահատկությունների, անձի ուղղվածության ու դիրքորոշումների հաշվառմամբ, դրանցից կախվածության հաղթահարումը: Մյուս կողմից, ռեգիոնալ և գլոբալ աշխարհաքաղաքական անկանխատեսելի զարգացումների պայմաններում, երբ ամենուր վտանգվում է անձի հոգեբանական անվտանգության պահանջմունքն ու դրա ապահովումը, հատկապես ՏՏ կիրառման համատեքստում խիստ արդիական է դառնում անձի մասնագիտական անվտանգության հոգեբանական նախադրյալների ուսումնասիրման հիմնախնդիրը:

Այս տեսանկյունից, Ալբերտ Մարատի Զուրաբյանի ատենախոսությունը առաջադրված թեմատիկայով և իր գիտակիրառական նշանակությամբ խիստ կարևոր է և արդիական: Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու տեսական գլուխներից և երրորդ՝ հիմնախնդրի հետազոտական գլխից, որոնցում առաջադրված գիտական խնդիրների լուծումները իրականացվում են ճիշտ ընտրված հոգեբանական և մաթեմատիկական վիճակագրական կուռ մեթոդների օգնությամբ: Ստացված արդյունքները ըստ հետազոտության կառուցվածքի ռազմավարական խնդիրների առաջնահերթության, ներկայացվում են անհրաժեշտ գիտական լեզվով և հոգեբանական գրագետ վերլուծություններով: Հետազոտության արդյունքների ցուցադրումը իրականացվում են աղյուսակների, հիստագրամների և գծագրերի տեսքով, որոնցում տեղ

գտած մաթեմատիկական ցուցանիշները վերլուծվում են համապատասխան վիճակագրական մեթոդների օգնությամբ: Աշխատանքն ավարտվում է 5 հիմնարար եզրակացություններով և գործնական առաջարկություններով: Օգտագործվել է 174 գրական աղբյուրներ, որոնցից՝ 21-ը հայրենական, 128 ռուսալեզու և 24-ը անգլերեն լեզվով: Հիմնախնդրի հետազոտական բաժինը հագեցած է բազմաթիվ աղյուսակների, դիագրամների և նկարների ցուցադրմամբ ուսումնասիրություններ, բազմաթիվ հավելվածներ, որոցում տեղ գտած արդյունքները, ըստ դրանց հերթականության համարների և ատենախոսության մեջ տեղ գտած էջերի թվանիշի, քննարկվում են համապատասխան խնդիրներին վերաբերվող վերլուծություններում:

Ատենախոսության **ներածության** բաժնում արտացոլված են թեմայի արդիականությունը, հիմնախնդրի ուսումնասիրման հայեցակարգային մոտեցումները, անձի մասնագիտական անվտանգության հիմնահարցի հեղինակի պատկերացումներն ու առաջադրված խնդիրների լուծման նպատակահարմար եղանակները, որոնք ամրապնդվում են բնագավառում հայտնի գիտնականների տեսական և գործնական աշխատանքների լույսի ներքո: Ատենախոսության տարբեր պահանջները ներկայացնող գիտական դրույթները, որոնք ձևակերպված են գրագետ, բովանդակալից կերպով, պարզորոշ դրսևորում են լուծվող խնդիրների հիմնական պահանջներն ու իրականացված աշխատանքների գիտական առումով նպատակահարմար, նախընտրելի մեթոդներն ու եղանակները: Աշխատանքի նպատակը, խնդիրները, դրանց լուծման եղանակներն ու մեթոդները հիմնավորվում են ատենախոսություններին ներկայացվող գիտական պահանջներին համապատասխան, որոնց տեսամեթոդական և կիրառական կողմերը հիմնավորվում են հիմնախնդրի վերաբերյալ ճանաչված արտասահմանյան և հայրենական գիտնականների առաջավոր գաղափարներով: Պարզորոշ ներկայացվում են աշխատանքի գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, աշխատանքի գիտատեսական նորույթն ու նշանակությունը, կիրառականությունն ու դրանց հեռանկարը: Մատնանշվում են նաև հավանական զարգացումների հեռանկարում SS մասնագետների գործունեության տարբեր բնագավառներում նրանց անձի մասնագիտական անվտանգության ապահովման կոնկրետ նախադրյալները: Ատենախոսության ներածության բաժնում արտացոլված դրույթները հիմնարար են, որոնք ամբողջական պատկերացում են տալիս կատարված աշխատանքների գիտագործնական կողմերի բովանդակության, հետազոտական տվյալների հավաստիության և դրանց հիման վրա արված եզրակացությունների վերաբերյալ:

Մասնագիտական գրականության վերլուծության առաջին գլխում քննարկվում են SS-ների մասնագետների գործունեության և անձի մասնագիտական հոգեբանական անվտանգության հիմնահարցերի հայեցակարգային խնդիրները: Ընդ որում, մասնագիտական գործունեության հոգեբանական բաղադրիչը հեղինակը դիտարկում է մասնագիտական գիտակցության շրջանակներում, որպես հասարակական գիտակցության ձև, որպես հասարակական պահանջների, իդեալների, պատկերացումների ամբողջություն: Այդ կառույցի ներքո հեղինակը գտնում է, որ գոյություն ունեն երկու կարևորոգույն բաղադրիչներ՝ այն է նորմատիվ և անհատական-անձնային բաղադրիչներ:

1. Նորմատիվ բաղադրիչը դիտարկվում է որպես մասնագիտության պահանջներին հարող կառուցվածքներ, որոնք առաջադրվում են մասնագետին:

2. Անհատական-անձնային բաղադրիչը դրսևորվում է որպես մասնագետի պատկերացումներ, համոզմունքներ, որոնցում ներառված են աշխատանքի նկատմամբ ձևավորված վերաբերմունք, ինչպես նաև վերաբերմունք մասնագիտական պարտականությունների վերաբերյալ:

Խնդրի մեկնաբանման նպատակով հեղինակի այդպիսի մոտեցումը բացատրվում է այն հանգամանքով, որ մասնագիտական գործունեությունը հանդիսանում է անձի ձևավորման հիմնական միջավայրն ու ակտիվության հիմնական ձևը: Այս շրջանակներում վերլուծվում են հոգեբանական անվտանգությանը վերաբերվող տեսական խնդիրների այն ամբողջությունը, որոնք փոքր ենթագլուխների ձևով համալրում են քննարկվող հարցերի ողջ ծավալը: Հոգեբանական անվտանգության խնդիրը մասնավորապես քննարկվում է սոցիալ-հոգեբանական տեսությունների շրջանակներում, որոնցում առանձնակի կարևորվում են Ա.Ա Կապտոյի, Ե.Մ. Իվանովայի, Վ.Դ. Շադրիկովի, Վ.Ս Պոլիկարպովի, Յու.Լ. Զինչենկոյի, Լասկար- Մազուր, ինչպես նաև Ն.Դ.Նիկանդրով, Օ.Գ.Գրոխոլսկայա համահեղինակների աշխատանքների և այլոց առաջավոր գաղափարների լուսաբանման ներքո: Աշխատություններում կարևորվում են պետության, հասարակության, ընդհանրապես միջավայրի նշանակության, անձի վրա դրանց ազդեցության սոցիալ-հոգեբանական հետևանքների և դրանցում շեշտավորվող նշանակալի փոփոխությունների բնութագրերը: Երկրորդ՝ անձնային բաղադրիչի արժեվորումը հիմնվում է Ա. Մասլոուի, Լ.Բաևայի, Ս.Մադդիի, Օ.Օ. Շեմյակինայի, Կ.Հորնիի և բազմաթիվ ուրիշ նշանավոր հեղինակների գաղափարների վրա:

Հաջորդ ենթագլխում Ա. Զուրաբյանը վերլուծում է անձի հոգեբանական անվտանգությանը վերաբերող աղբյուրների հիմնական գաղափարները՝ կենտրոնացնելով դրանց հայեցակարգերը իր կողմից լուծվող խնդիրների մեկնաբանման շուրջ: Այնուհետև ընդհանրացնելով, որպես ընդհանուր կարծիք հոգեբանական անվտանգության կառուցվածքի բազմակողմանի վերլուծություն, տալիս է դրանց բաղադրամասերի վերաբերյալ սեփական մեկնաբանումներն ու կատարում անհրաժեշտ ընդհանրացումներ:

1.4. ենթագլուխը իր մեջ ներառում է տարբեր բնագավառներում մասնագիտական գործունեություն իրականացնող անձի հոգեբանական անվտանգության վերլուծությունները: Առանձնապես կարևորվում են կենսագործունեության տարբեր պայմաններում գործող անձանց հոգեբանական անվտանգության խնդիրները՝ որպես անձի առողջ ապրելակերպի, մարդ - բնություն համակարգերի համագործակցության, անձի ընտանեկան երջանկության անհրաժեշտ պայման: Առանձնակի կարևոր են տեղեկատվական անվտանգության հիմնախնդրին վերաբերվող աղբյուրների վերլուծությունները, քանզի ապրելակերպի պայմանների կտրուկ փոփոխությունների պայմաններում դեռևս մշակված չեն միջոցներ ու համակարգեր, մյուս կողմից, շատ շատերը դեռևս լիարժեք չեն տիրապետում տեղեկատվական անվտանգության գիտելիքներին, որոնց արդյունքում հաճախ կանգնում են ինչպես անձնական, այնպես էլ միջավայրի, հասարակության, նույնիսկ երկրի մակարդակում առաջացող մեծ խնդիրների առջև: Այնուհետև հեղինակը անդրադառնում է անձի կառուցվածքում գոյություն ունեցող պահանջմունքների վերլուծությանը վերաբերվող աղբյուրների քննարկմանը, համեմատում տարբեր հեղինակների մոտեցումներն ու ընդհանրացնելով մեկնաբանում դեռևս չլուսաբանված հարցերի խնդրահարույց կողմերը:

Ժամանակակից մարդու կյանքում գերակայում է մտավոր աշխատանքը և այս տեսանկյունից կարևորվում է մասնագիտական բնագավառում նրա տիպաբանական առանձնահատկությունները սթրեսակայունության, հոգեկան աշխատունակության, հոգեկան հուսալիության դրսևորման տեսանկյունից: Հեղինակը առանձնացնում է մի շարք բնագավառների, այդ թվում նաև գիտնականների, մանկավարժների, ճարտարագետների, SS ոլորտի մտավոր գործունեության առանձնահատկություններին վերաբերվող, խնդիրներ որոնք առընչվում են ինչպես նրանց անձնական, այնպես էլ մասնագիտական յուրահատկությունների հետ: Ինչպես հեղինակն է նշում՝ «Հաճախ այդ խնդիրների անտեսումը, կամ դրանց գոյության քողարկված բնույթը ժամանակի ընթացքում մասնագիտության բնագավառում անվերապահ հանգեցնում է հոգեբանական անվտանգության խնդիրների առաջացման»:

Ա. Զուրաբյանի ատենախոսության 2-րդ գլուխը նվիրված է SS կիրառման պայմաններում անձի անհատական առանձնահատկությունների և մասնագիտական այրման խնդիրների տեսական կողմերի մեկնաբանմանը: Հեղինակը ներկայացնում է հիմնախնդրի ձևավորման էվոլյուցիան, տարբեր բնագավառներում բարեփոխումների ու զարգացման հեռանկարի կանխատեսումների համայնապատկերում դրանց պահանջարկների հրատապությունը, հիմնախնդրի նկատմամբ հասարակության ու գիտական շրջանների վերաբերմունքի ձևավորման սոցիալ-հոգեբանական, տեխնիկա-տնտեսական պայմաններն ու դրանց հրամայականները: Այնուհետև անդրադառնում է SS մասնագետի հոգեբանական բնութագրում գոյություն ունեցող մի քանի ասպեկտների(ճանաչողական, հաղորդակցական, տեխնոլոգիական, կիրառական և այլն), որոնք հիմք են հանդիսանում նեղ մասնագիտություններում (ծրագրավորող, փորձարկող, համակարգչային ճարտարապետ և այլն) դատողություններ անել մասնագետի կոմպետենտության ու նրա հեռանկարի վերաբերյալ: Այս տեսանկյունից Ա.Զուրաբյանը անդրադառնում է SS-ների մասնագետների գործունեության և անձի ակտիվության տարբեր խնդիրներին վերաբերվող գիտնականների տեսակետներն ու խնդրի մեկնաբանման ասպեկտներին: Հոգեբանական անվտանգության ապահովման հարցում հեղինակը առանձնակի կարևորություն է տալիս անձի անհատական հոգեբանական առանձնահատկություններին և ըստ այդմ վերլուծությունների շնորհիվ վեր հանում առաջավոր գիտնականների աշխատություններում հարցի ուսումնասիրվածության նշանակալի կողմերը, տալիս անհրաժեշտ հիմնավորումներ: Այնուհետև հեղինակը հոգեբանական անվտանգությունը քննարկում է որպես մասնագիտական գործունեության դրդապատճառ, որում վերլուծվում և արժեվորվում են հայրենական և արտասահմանյան գիտնականների տարբեր տեսակետներն ու խնդիրների լուծման ինքնատիպ մոտեցումները: Ուսումնասիրվող աղբյուրներում անձի հոգեբանական անվտանգության դրսևորումների հիմնախնդիրը քննարկվում են նաև իրավիճակային վտանգի և անվտանգության պայմաններում:

Անձի անվտանգության հիմնահարցի ուսումնասիրություններում հեղինակը առանձնակի կարևորում է մասնագիտական այրման հիմնախնդիրը: Առանձնակի կարևորություն տալով տարբեր հեղինակների կարծիքների վերլուծություններին, հեղինակը եզրկացնում է, որ ամբողջ կյանքում մարդու ունեցած մասնագիտությունը հոգեհիգիենայի առումով գնահատվում է ինչպես դրական, այնպես էլ բացասական ազդեցության ասպեկտներով: Առանձին դեպքերում, որոշ հեղինակներ

մասնագիտությունը դիտարկում են նույնիսկ որպես անձի դեֆորմացիայի, դեգրադացիայի աղբյուր: Առանձին հեղինակների աշխատություններում մատնանշվում են անձնային առանձնահատկություններ, որոնք նպաստում են մասնագիտական այրման գործընթացի տևական պահպանմանը, որոշները ընդգծում են մասնագիտությունների յուրահատուկ առանձնահատկություններն ու բարոյահոգեբանական գործոնների դերը: Այնուհետև հեղինակը անդրադառնում է աշխատանքի հոգեբանության բնագավառում մասնագիտական այրման հիմնախնդրին վերաբերվող տեսակետներին, հիմնախնդրի ձևավորման փուլերի, գոյություն ունեցող մոդելների, դրանցով պայմանավորված, օրգանիզմում տեղի ունեցող հոգեֆիզիոլոգիական փոփոխությունների նկարագրություններին, ինչպես նաև գոյություն ունեցող կանխարգելման և ուղեկցվող վերականգնողական աշխատանքների յուրահատկությունների մեկնաբանություններին: Հարկ է նշել, որ տեսական երկու գլուխներն էլ ավարտվում են հիմնախնդրի վերաբերյալ անհրաժեշտ ընդհանրացումներով և եզրակացություններով, որոնք հետագա հետազոտական աշխատանքներում կարևոր, որոշիչ դեր են կատարում առաջադրված նպատակի և խնդիրների հաջող իրականացման գործընթացում:

Երրորդ «Կրթության ոլորտի և SS մասնագետների մասնագիտական գործունեության հոգեբանական անվտանգության հետազոտությունների վերլուծությունը SS կիրառման տարբերությունների հիման վրա» խորագրով գլխում ներկայացվում են հետազոտության մեթոդների ընտրության, դրանց կիրառական և գիտական կողմերի հիմնավորման, հետազոտական խմբերի համալրման և համակազմի ընտրության հիմնավորումները, ինչպես նաև հետազոտական աշխատանքների իրականացման ռազմավարական և կազմակերպչական խնդիրների մեկնաբանումները: Հետազոտական գործիքակազմը արժեվորվում է իր կիրառական բազմակողմանիությամբ, հուսալիությամբ վալիդությամբ և դրանց գիտական հիմնավորվածությամբ: Հետազոտության մեթոդների համարժեք մարտկոցի և մաթ ապարատի ճիշտ ընտրության ու դրանց հմուտ կիրառման շնորհիվ հնարավորություն է ընձեռնվում բացահայտել կրթական ոլորտի SS մասնագետների գործունեության հոգեբանական անվտանգության բաղադրիչների համակարգը, ինչպես նաև մասնագետների անձնային գծերի արտահայտվածության աստիճանը, դրանց միջև գոյություն ունեցող համահարաբերակցային կապերի դրսևորումները: Հետազոտությունների շնորհիվ բացահայտվել են առցանց և դասական ոճով գործունեություն իրականացնող մասնագետների գործունեության իրականացման դրդապատճառների համակարգն ու դրանց արտահայտվածության աստիճանը, մասնագետների հոգեբանական այրման մակարդակները, այրման գործընթացին նպաստող գործոնների համակարգն ու դրանց արտահայտվածության աստիճանները, որոնք մաթեմատիկական վիճակագրական տվյալների ձևով ներկայացվում են նկարների ու դիագրամների տեսքով: Հետազոտության արդյունքների վերլուծությոնները, դրանց հիման վրա կատարվող հետևությունները հիմնված են հեղինակի կողմից հետազոտության գործիքակազմի կիրառման հմուտ կարողությունների վրա, իսկ արվող եզրակացությունները խոսում են հեղինակի տեսական բարձր մակարդակի պատրաստվածության մասին: Դրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ հետազոտության շնորհիվ տարբեր մեթոդներից ստացված արդյունքների միջև գոյություն ունեցող կապերն ու օրինաչափությունները գիտականորեն հիմնավորու նպատակով հեղինակը կիրառել է Սպիրմենի Կոռելյացիոն գործակցի որոշման աղյուսակը: Հեղինակը

նպատակահարմար է գտել աղյուսակների տեսքով(աղ. 2-11-ը) մանրամասն ցույց տալ առցանց և դասական ոճով գործող SS տարբեր մասնագետների հոգեբանական անվտանգության գործոնային վերլուծության համահարաբերակցական կապերն ու գոյություն ունեցող օրինաչափությունները: Ատենախոսական աշխատանքը ամփոփվում է տեսական և էմպիրիկ ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում արված եզրակացություններով, օգտագործված գրականության ցանկով և դրանց հիման վրա կատարված գործնական առաջարկություններով և հանձնարարականներով:

Ատենախոսական ախատանքը աչքի է ընկնում առաջադրված խնդիրների հստակությամբ, արդիականությամբ ու դրանց լուծման գիտականությամբ: Տեսական վերլուծություններն ու հետազոտության գործընթացի իրականացման տրամաբանությունը բխում է ատենախոսության առաջադրված նպատակի և խնդիրների իրագործման գիտական պահանջներից, ինչը խոսում է հեղինակի՝ Ալբերտ Մարատի Զուրաբյանի մասնագիտական և գիտական հասունության մասին:

Այնուհանդերձ, աշխատանքում առկա են որոշ տեխնիկական բացթողումներ և առանձին դիտողություններ, որոնց վերաբերյալ կուզեինք նշել:

1. Ձեր հետազոտություններում ուսումնասիրում եք SS ոլորտում գործող մասնագետների հոգեբանական այրման հիմնախնդիրը, որում անդրադառնում եք նաև հուզական լարվածությանը: Մասնագիտական գրականության մեջ (Դավիդով, Ե.Ռիժոնկին, Լ.Լևի և այլոք), հուզական լարվածությունը առանձին դեպքերում դիտարկվում է նաև որպես հուզական սթրես: Կոնկրետ ձեր հետազոտությունների դեպքում՝ իրենց փուլայնությամբ, օրգանիզմում տեղի ունեցող գործառնական փոփոխություններով, բավականին շատ ընդհանրություններ ունեն սթրեսի հետ: Այս դեպքում որտեղ եք տեսնում այն սահմանը, որում փոփոխությունները դիտարկում եք որպես հոգեբանական այրում, մյուս դեպքում կարելի էր որոշ մեկնաբանություններ տալ որպես հուզական լարվածություն, կամ սթրես:
2. Ձեր հետազոտություններում շեշտավորվում են կրթության ոլորտի և SS մասնագետների մասնագիտական գործունեության հոգեբանական անվտանգության խնդիրների ոսումնասիրությունները, (մասամբ նաև անձի առանձին հատկանիշներ): Հոգեբանական անվտանգության բնութագրերի փոփոխությունները ծագումնաբանական առումով կրում են նաև անձնային բնույթ: Մեր դիտարկմամբ հոգեբանական անվտանգության հետազոտական աշխատանքներում գրեթե անտեսված են անձի «Ես» կառուցվածքում գոյություն ունեցող բաղադրամասերի գործառնական հնարավորությունների ոսումնասիրությունները: Բացի այդ, հայտնի է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների և միջոցների տիրապետումը պահանջում է անձի կառուցվածքի համալիր գործոնների մասնակցություն, որոնց գործառնական հնարավորությունները ձեռք են բերվում օրգանիզմի տարբեր համակարգերի սերտ համագործակցության պայմաններում (նյարդային, զգայաշարժական, կոգնիտիվ, հուզական և այլն): Ունե՞ք արդյոք տվյալների մշակվածության որևէ արդյունք, որով կարող եք ապահովել նշված հարցադրման պահանջները:
3. Կրթության ոլորտի SS մասնագետների հոգեբանական անվտանգության խնդիրներին անդրադառնալիս ուսումնասիրել եք դասական և առցանց եղանակներով գործունեություն ծավալող անձանց անձնային գծերի

արտահայտվածությունը (աղ. 1): Կարծում ենք նպատակահարմար կլիներ, որ տարբերակվերին նաև նրանց տարիքային, սեռային, պրոֆեսիոնալիզմին վերաբերվող անձնային հատկանիշների փոփոխությունները, այդ թվում նաև անձի կողմից համակարգչային և մյուս տեխնոլոգիաներին տիրապետման «աշխատանքային ծանրաբեռնվածությունը կրող» հոգեկան գործընթացների ներգրավվածության բնույթը, երևույթի արտահայտվածության մակարդակը և այլն: Կարծում ենք, որ նման դեպքում անհամեմատ կամբողջականացվեին հիմնախնդրի լուծման պահանջները, ինչպես նաև կշահեր ատենախոսական աշխատանքի որակը:

Համոզված եմ, որ արված դիտողություններն ու ցանկությունները բոլորովին չեն ստվերում ատենախոսության գիտագործնական նշանակությունը, տեսական և հետազոտական աշխատանքների վերլուծման գիտական նշանակությունը, ստացված արդյունքների հավաստիությունն ու եզրակացությունների կարևորությունը:

Եզրակացություն

Ալբերտ Մարատի Զուրաբյանի «Անձի մասնագիտական անվտանգության հոգեբանական նախադրյալների ապահովումը SS կիրառման պայմաններում» թեմայով ատենախոսության ԺԹ.00.01. «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք: Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը համառոտ արտացոլված է նաև սեղմագրում և դրանցում ներկայացված գիտական խնդիրների ձևակերպումներն ու բովանդակությունը համահունչ են միմյանց:

Ատենախոսական աշխատանքը իր բովանդակությամբ, տեսամեթոդական, գիտական վերլուծությունների խորությամբ, առաջադրված հետազոտական խնդիրների ինքնատիպ լուծմամբ և գիտական եզրակացությունների ձևակերպմամբ համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսական աշխատանքներին ներկայացվող աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին:

Ատենախոսության հեղինակ Ալբերտ Մարատի Զուրաբյանը իր գիտական հասունությամբ, ներկայացրած գիտական բարձր մշակույթով հագեցած, գիտագործնական մեծ կարևորություն ունեցող ատենախոսության համար արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Հայկական Պետական Մանկավարժական
Համալսարանի գիտքարտուղար Մ. Իսպիրյան

Մ.Պ.Մկրտումյանի ստորագրությունը
հաստատում եմ:

Հոգ. գիտ դոկտոր, պրոֆեսոր Մ. Մկրտումյան

25.07.23.